ԳՐԻԳՈՐ ԳՅՈՒԼՅԱՆ
(Դասախոս հոգևոր ճեմարանի)

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՈՐ ՏԱՐՎԱ ՍԵՄԻՆ ԵՎ ՄԱՂԹԱՆՔՆԵՐ*

Դեկտեմբերի 31-ի այս գիշերը, Կաղանդի գիշերը, մենք կանգնած ենք հին ու նոր տարիների սահմանագլխին: Այս գիշեր մի տարի ևս պոկվելով մեր կյանքից՝ միանում է հավիտենության, կամ, հակադարձաբար, մենք ինքներս ենք մի տարով մոտենում հավիտենության:

Հավիտենությունը ժամանակն է, ու ժամանակը Անծանոթի գոյության ձևն է՝ անընկիզք, անվախճան:

Մարդը իր գոյությամբ, իր հարատև ստեղծագործությամբ վկայում է Անծանոթի փառքը, որովհետև Անծանոթը բնակվում է մարդու մեջ, գործում է մարդու միջոցով, և մարդու բացահայտումով՝ փառավորվում է: Առանց հավատքի օգնության՝ փակ է ճամփան, խավարը՝ անթափանց, որովհետև խիստ սահմանափակ են մեր գիտելիքները, և օվկիանոսի համեմատությամբ՝ նրանից հանված մի կաթիլ ջրի չափ անգամ չկան: Այնքան անհուն է Անծանոթն իր հարափոփոխ գոյությամբ, իր այլազան փոխակերպումներով:

Ամեն կողմից, ամեն րոպե, ամեն քայլափոխին, տխրության թե ուրախության ժամին, սիրո թե ատելության մեջ, խիզախումների թե նահանջի պահին՝ մենք զգում ենք Անծանոթի անտեսանելի ներկայությունը: Նա է որոշում, նա է գծում մեր գոյության ճանապարհը:

Այս գիշեր քաղաքակիրթ մարդկությունն ամբողջ առանձին ուրախ սեղանների շուրջ համախմբված՝ տոնում է նոր տարին: Նոր տարին անվախճան ժամանակի և վերանորոգվող կյանքի խորհրդանիշն է: Մեր այսօրը երեկի շարունակությունն է, ինչպես մեր վաղը՝ մեր այսօրի շարունակությունը: Ինչպես մեր այսօրը նման չէ մեր երեկին՝ այնպես էլ մեր վաղը նման չի լինելու մեր այսօրին: Այս միանմանության և այս բազմազանության մեջ է ամբողջ կյանքի խորհուրդն ու իմաստը: Ժամանակն ինքն իր մեջ՝ միասնական է, անբաժան, անտրոհելի: Փոփոխական է միայն մարդը, եզակի, առանձին անհատ մարդը: Բայց անփոփոխ է մարդկությունը, այն, որ հավիտենական է, այն, որ ժամանակի թանձրացյալ արտահայտությունն է և նրա իմաստավորումը միաժամանակ: Ժամանակը, իր անվախճան հոսանուտի մեջ, մնում է անփոփոխ: Փոխվում է միայն մարդը. փոխվում է հույզերով, ապրումներով, մտորումներով, փոխվում է ցանկություններով, երազանքով, խիզախումներով, տեսիլքով: Եվ մարդու այս անընդմեջ փոփոխությունը անվախճան ժամանակի հարստացումն է խորությամբ և պանծացումը՝ մակերեսով:

Փոփոխվող, վերջացող ու վերսկսող կյանքի տոնն է Նոր տարին: Այս է պատճառը, որ Նոր տարվա սեղանը միայն ու միայն ուրախության սեղան է, որովհետև եթե անցնում է մասնակին, մնում է ընդհանուրը, եթե անցնում է մարդը, մնում է մարդկությունը, որն հարստանում, ճոխանում է իր մեջ ընդունելով ամեն մի անցնող մարդու հույզերի, մտորումների և իրագործումների ամբողջ հարստությունը:

Ո՞րն է արդյոք այն իմաստը, որ մարդը ծրարել է նոր տարվա խորհրդի մեջ: Նոր տարվա խորհուրդը, իմ կարծիքով, ոչ այլ ինչ է, եթե ոչ ծանոթի և անծանոթի հավիտենական կամրջումը՝ կյանքի հարատևման միակ նախապայմանն ու ամենահզոր գործոնը:

Ծանոթը ավարտված գործն է՝ իր կենսահյութը սպառած ստեղծագործություն, որն անվախճան ժամանակի մեջ մնում է որպես

* Խոսված դեկտեմբերի 31-ի գիշերը, Ամանորի սեղանի շուրջ:

նյութական բարիք և իրողություն, որպես իրային ապացույցը այն բանի, որն այլևս չի կարող կրկնվել:

Նոր տարվա սեմին, դեռ ներս չմտած, մարդիկ սովորաբար հետադարձ մի հայացքով չափում են իրենց անցած ուղին, հանրագումարի բերում իրենց կյանքի փորձը: Եվ այստեղ ահա, հին ու նոր տարիների սահմանագլխին, ծանոթի և անծանոթի բախումից, հակասությունների միասնությունից՝ մեր հույզերից ու հույսերից, մեր արցունքից ու ծիծաղից, մեր տխուր ու բարի վերհիշումներից հյուսվում է մեր կյանքի երգը: Երգով ենք մենք մեզանից հեռացնում ծանոթը և մոլեգին ոստումով անցնում նոր տարվա սահմանը: Սահմանից անդին Անծանոթն է՝ իր հավիտենական կանչով, իր անդադրում հրավերով:

Նոր տարվա սեմին մենք ձևակերպում ենք մաղթանքներ, բարեմաղթություններ, ցանկություններ, երազանքներ, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ Անծանոթի կանչին ու հրավերին տրված պատասխաններ: Անծանոթի հպումից՝ մանուկը ժպտում է, ցնծագին ծափ է տալիս և, զգեստավորված իր անմեղությամբ, ոսկե ծառից կախված հրաշալի խաղալիքներ է երազում: Անծանոթի հանախանքը հրդեհում է երաժշտի ներքին տեսողությունը և կախարդական հնչյուններով դաշնավորում է նրա սրտի ու հոգու ելևէջները: Անծանոթի թելադրանքով՝ բանաստեղծական չափատողների մեջ՝ անձև, անգույն քառսից Ձևն է կաղապարում բանաստեղծը՝ կյանքի ներդաշնակությունը անձրեվելով ծարաված հոգիների անդաստանի վրա: Անծանոթի ցուցումով՝ լուսավոր պոռոտաներ, երկնահաս շենքեր է երազում ճարտարապետը, անհնարին սխրանքների մասին է մտածում հերոսը, գյուտարարը. նոր նախագծումներ է անում պետական գործիչը, ներանուշ տեսիլքով է լաստավարում հոգևորականը: Եվ այսպես ահա բոլորը, մեծ թե փոքր, տեր թե ծառա, իշխան թե ռամիկ նոր տարվա սեմին լցվում, բեղմնավորվում, աճում և հզորանում են Անծանոթի ամենակարող զորությամբ:

Ահա այս է, իմ կարծիքով, որ կազմում է նոր տարվա խորհուրդը: Նոր տարվա ամբողջ հմայքը, խորհուրդը պայմանավորված է Անծանոթի կախարդանքով: Անծանոթն է աև ստեղծարար սկիզբը, որտեղից սնվում է մեր կենդանությունը, որտեղից սկսվում է մեր գոյության իմաստավորման և տարածավորման հրաշապատում դյուցազնագիրքը: Եվ անծանոթը այլ անունով կոչվում է Աստված, որին վկայելու և փառավորելու համար ստեղծված է մարդը՝ ողջ բնության և ստեղծագործության թագն ու պարծանքը:

Նոր տարվա այս ուրախ սեղանի շուրջ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, համախմբված են այս սուրբ հաստատության հոգևորական և աշխարհական աշխատողները: Նոր տարին ինչպես ուխտի վերանորոգման, այնպես էլ աշխատանքային ծրագրերի նախագծման օր է: Կյանքը առաջ չի շարժվում միայն մեծ խոսքերով, մեծ նախագծումներով: Բավական է, որ մեզանից ամեն մեկը գիտակցի իր տեղն ու դերը հասարակության մեջ և ըստ այնմ էլ գործի. անպայման գործերը լավ կընթանան: Մեր գործունեության ոլորտը սուրբ Էջմիածինն է, որի պայծառության համար կոչված ենք աշխատելու մենք բոլորս:

Իսկ ի՞նչ է սուրբ Էջմիածինը:

Սուրբ Էջմիածինը մեր ժողովրդի հոգևոր թագավորության անառիկ միջնաբերդն է: Այսօր ոչ մեր արքաները կան և ոչ էլ նրանց արքայական պալատները: Այսօր ոչ մեր իշխանները կան և ոչ էլ նրանց իշխանական ապարանքները: Բայց կա սուրբ Էջմիածինը իր գահակալով. կան մեր ոգու ամրոցները՝ մեր սքանչելի տաճարները: Ինչո՞վ բացատրել այս երևույթը: Պատահականությա՞մբ արդյոք: Ո՛չ, կյանքում պատահականություններ չկան: Կյանքում ամեն ինչ ունի իր ներքին տրամաբանությունը: Այսօր սուրբ Էջմիածինը կա, որովհետև մեր ժողովուրդը այն կառուցել է իր հոգու նմանությամբ, իր հոգու վեմի վրա, նրա մեջ խտացրել է այն ամենալավն ու ամենավսեմը, որ նա տեսել, ընկալել, ըմբռնել և իմաստավորել է կյանքում: Սիալվում են բոլոր նրանք, ովքեր պատմությունը նույնացնում են դեպքերի ու թվականների պատմության հետ: Մարդը ի սկզբանե աստված չէ, բայց նա իր ստեղծագործությամբ աստվածանում է, իր էությամբ խորխորատներից վեր է խոյանում դեպի իր հոգու կատարները, այնտեղից զԱստված տեսնելով՝ նրան նմանվելու համար: Իսկական պատմությունը՝ մարդու այս աստվածացման ընթացքի հայելիացումն է: Այս տեսակետից սուրբ Էջմիածնի պատմությունը, նրա կառուցման և խորհրդի ամբողջական պատմությունը մեր ժողովրդի պատմությունն իսկ է, իր արտահայտության ամենավսեմ ձևի մեջ: Այս սուրբ տաճարը, քարեղեն այս հուսկապ կառույցը մեր աչքին աննյութանում է, իր խորհրդով լցնում է մեր ամբողջ պատմությունը՝ դառնալով նոսա ծառնեռանի ամենահիմնական տարրերը: Սրտում Էջմիածինը մեր աչքին ռեալ հոնիկը ծգվող աև լուսեղեն սահմանն է, որին բարձրանալով մենք զԱստ-

ված ենք տեսնում: Ահա այս է սուրբ Էջմիածինը ամեն մի ճշմարիտ հայի համար:

Շնորհավոր Ձեր Նոր տարին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ, մեր պատմական սուրբ Աթոռի արժանընտիր գահակալ: Սուրբ Էջմիածինը իր խորհրդով ոգեշնչում և պարտավորեցնում է Ձեզ. Ձեզ առանձնացնում, վեր է բարձրացնում սովորական մահկանացուներից: Դուք այսօր պատմություն եք և պատմության շարժիչ ուժերից մեկը: Դուք այսօր այն միակ համահայկական անձնավորությունն եք, որի մեջ մարմնավորվում է մեր ժողովրդի բարոյական միասնության խորհրդանիշը: Սուրբ է Էջմիածինը, սուրբ է նրա գահակալը:

Շնորհավոր Ձեր Նոր տարին, ով հավատքի որդիներ, մեր ազգի ու եկեղեցու ծառայության կոչված մատաղահաս հոգիներ: Ձեր կոչումի գիտակցության հետ ունեցեք նաև ձեր կոչման հպարտությունը: ՁԱստված կարելի է ճանաչել միայն հոգու բացարձակ անմեղությամբ, սիրո ներանուշ ուժով, համասիրուն բարության շողարձակումով: Անտարբերությունը չարի նկատմամբ հավասարազոր է մեղսակցության: Պետք է խափանել չարը, նպաստել բարու հաղթանակին: Հավատացեք Աստծուն, հավատացեք մարդուն, և վկայեցեք. վկայեցեք հանուն սիրո, հանուն արդարության, հանուն վերանորոգվող կյանքի հավիտենական ճշմարտության: Թող սերը առաջնորդի ձեզ, խոնարհությունը բարձրացնի ձեզ, ծառայության ոգին վարձատրի ձեզ: Եթե դժվար է հայ լինել, բայց պատվի գործ է հայ լինել: Ուր էլ լինեք, միշտ բարձր պահեցեք մեր ժողովրդի արժանապատվությունը: Ատամներով պաշտպանեցեք մեր լեզուն. բարձր, գեղեցիկ, վայելուչ հնչեցրեք այն: Եթե երբեմն վհատություն ինչի ձեր հոգիներին, հիշեցեք այս տունը, հիշեցեք աստվածահաստատ սուրբ Էջմիածինը: Հիշեցեք ձեր փառավոր, աստվածախոս նախնիներին. ոգեշնչվեցեք նրանց օրինակով, գոտեպնդվեցեք նրանց հավատքով: Մեր ժողովուրդը հավատքի ժողովուրդ է, ունի տեսիլք, հղացք ու սլացք: Դուք տեսաք դրանց ապացույցները, դուք տեսաք Հռիփսիմեն, Հաղպատն ու Սանահինը: Դուք ամեն օր տեսնում եք սուրբ Էջմիածնի երկնասլաց կաթողիկեն: Մոռացեք ճահիճը: Մի խոնարհվեք ուրիշ կուռքերի առաջ: Նայեցեք վերև. դիտեցեք մեր եկեղեցիների սրածայր կաթողիկեները: Նրանք ձեզ ցույց կտան երկնքի ճանապարհը:

Շնորհավոր Ձեր Նոր տարին, սրբազան հայրեր, բարեշնորհ սարկավագներ, դասախոս ընկերներ, աշխատակից եղբայրներ: Թող սկսվող նոր տարին ձեզ բերի երջանկություն, ձեր ազնվագույն իղձերի, երազանքների իրագործում: Թող սկսվող նոր տարին լինի մեր հայրենի կառավարության, մեր հարազատ ժողովրդի հզորացման, ստեղծագործ աշխատանքի, խաղաղության և երջանկության տարի: Թող սկսվող նոր տարին լինի հայրենի հողի վրա, հայ պետության, հայ եկեղեցու հովանու ներքո՝ մեր բազմաչարչար, աշխարհասփյուռ հայ ժողովրդի տունդարձի, համախմբման և ամբողջացման տարի: